

Ն Ա Խ Ե Ի Գ Ա Ն Ք

III

(Մի հատուած՝ Աստղիկ Պօլմայից)

I

Ինձ մօտ էք դարձեալ ուրախ ու պայծառ
 Ո՛վ դուք երեւուն, անգին ոգիներ,
 Ու բաց էք անում իմ մրտքի առջեւ
 Անցած օրերի ուրախ պատկերներ:

Մի անյաղթ ոյժով մղում էք դուք ինձ
 Դէպի խորքերը հեռու անցեալի,
 Ուր մի միջապատ շղարշի միջից
 Փառքն է՝ երեւում անցած օրերի:

Ապրում եմ ձեզ հետ այն լուռ աշխարհում,
 Միեւելի գրկում իմ հին նախահարց,
 Որոնց յիշատակն ու բարի անուն
 Այժմեան սերնդից վաղու են մոռցուած:

Եւ ստուերների այն լուռ վայրերում
 Լսում եմ ձեզ հետ մի հին պատմութիւն,
 Որ այնքան յուզիչ սիրտս է աղմկում
 Ինչպէս սիրելի մի յիշողութիւն...

II

Կանգ առ, ո՛վ անցորդ, կանգ առ մի վայր-
 Այս ողորկ լեռան անշուք գագաթին, (կեան
 Կանգ առ ու լրսիր թէ՛ ի՞նչ են երգում
 Չըքնաղ փերիններն այս մութ գիշերին:

Նրանց ձայնի մէջ գուցէ կը լրսես
 Երազ օրերից մնացած մի անցք,
 Կը լրսես գուցէ Աստղիկ զիցուհու
 Միւրոյ ցաւերի խորունկ հառաչանք:

Գուցէ կը հասնի՞ քո լսելիքին
 Յաւագին մրմունջն Հայոց զիցուհու
 Որ այնքան երկար, այս լեռան գլխին,
 Միւրոյ ցաւերով տանջուեց սրտառու:

Եւ կամ կը լրսես մի հին գուսանի
 Անուշ երգերի թովիչ աղաղակ,
 Որ այս սրբազան անձաւի կըշտին
 Երգել է այնքան օրհնութեան նըւագ...

Մութ գիշերին փերինները
 Լեռան գլխին ժողոված,
 Երգ են երգում ճշող ձայնով,
 Չայնով տխուր ու յոգնած:

Քարքէ լեռը սեւ ու ողորկ
 Կանգնած է լուռ ու անշուք,
 Իսկ մըթի մէջ միշտ լրսուում է
 Կախարդական մի շըշուկ:

Մութն է նա և քարանձաւը
 Հայոց չըքնաղ զիցուհու,
 Ուր լրսուում է արձագանքը
 Փերինների երգերու:

Իսկ ծեր Եփրատն այդ երգերին
 Չայնակցում է խոր յոյզով,
 Եւ չի՛ թողնում խեղճ անցորդին
 Ուրախանալ յոյսերով...

IV

Այն աստուծային անձաւի կըշտին
 Վաղուց է լրեւ երգը Միդասի,
 Եւ մենք, ո՛ր Մուսա, էլ զուր ենք զընում
 Լսելու երգը ծերուկ գուսանի:

Նրա բամբիռի ձայնները թախծոտ
 Մայրիների տակ էլ չեն մըմնում,
 Նրանց տեղ այսօր խորունկ ցաւերով
 Միայն թափառիկ քամին է ճըշում,

Եւ ծերուկ աշնան ղեղնած մացառներ
 Օրօրում է միշտ ձայնով հառաչուն,
 Ինչպէս երբեմն երգն էր Արոնի
 Միւրոյ զիցուհու քարայրում հնչում...

V

Թէեւ տըխուր և յուզիչ են
 Փերինների երգերը,
 Բայց դու լրսիր, անցորդ եղբայր,
 Այն սրտառու ձայններ:

Նրանք քեզի պիտի մեղեն
Դէպի դարերն հեռաւոր,
Ուր ապրել են այնքան ուրախ
Մեր նախնիքը փառաւոր:

Անցած օրւայ մի պատմութիւն
Սուրբ են դարձրել այս վայրեր,
Այս վայրերը, ուր որ ապրեց
Աստղիկ կոյսը սեւահեր:

Մահկանացուի բուն սիրով
Այստեղ սիրեց վահագնին,

.
.
Այս անձաւում, որն այն օրից
կոչուեց «Սենեակ վահագնի»,
Ուր որ Հայոց ահեղ արքան
Յանձնուեց սիրոյ կրքերի:
Դէ՛հ հետեւիր, բարի անցորդ,
Դու հետեւիր իմ երգին,
Եթէ կ'ուզես ծանօթ լինել
Հին օրերի այս անցքին...:

ՊԵՏՐՈՍ ՄԱՃՈՌԱՆ

ՅԵՐԿԵՐԻՐԵԱԿ ՈՐԽՏԻՍ ՄԵԻԹԱՐԱՅ



Մեծ է մեզ օրս այս, երկինք ի վերուստ կան ունկընդիր,
Եւ ի ծագաց հայրենեաց սերտ նուիրակօք իւր երկիր.
Իսկ զինչ ընդ մէջ երկոցուն տատանելոյս ինձ արժան
Բայց բան հակիրճ՝ որ յեղբարցդ ոգիս յեռցի անբարժան.

Մըխիթարայ էջ որդիք, կեցցէ ի ձեզ Մըխիթար
Եթէ 'նդ նորայն.... շաւիղ գնասլիք անվըթար,
Ճշմարտութեան հոգի 'ձեզ քան ձեւ պաճոյճ և անուն,
Վըկայեցէ խիղճ մըտաց, և մի՛ հոչակ անկայուն.

Թողաք զաշխարհ, և աշխարհ սողոսկի 'նդրունս սրբոյ տանս
Բազմալեզու այցելուք և խորհըրդովք այլազանս.
Այսօր փարի զգուանօք, վաղիւ լարէ գաղտ թակարդ.
Բայց որոտայ վըճիռն՝ ոչ յուսալ ի բնաւ սնոտի մարդ:

Ճշմարտութեան եմք քարոզ, զայս նախ ուսլիք 'ւ ուսուսլիք,
Եւ Անմ որ զինքն ասաց քոլ ճշմարտութիւն՝ նմանեալիք.
Մի՛ 'ստ աշխարհիս գիտութիւնս հոգալ յողալ վայրապար
Որ գործէ հպարտս և գոռոզ, այլ ի Սէր, Սէր սրբբարար:

Եւ ոչ լոկ սէր վերապացիկ, այլ որ զեղբարբքն փարի,
Որով և կրօնս այս և տուն բարգաւաճեալ զարդարի.
Սուրբ է աւուրս յիշատակ՝ զոր մեզ Բարձրեալն ինքն արար.
Եւ մինչ թըթիւ երկերիւր ամաց հնչէ զՄըխիթար,

Ամբարձէ՛ք զաչս ի վեր, վերագոյն եւրս զոգիս.

Զինչ նշմարէք լուսապիւռ շամանդաղեալ ընդ շոգիս...

Ահա նէ, Հօրս օրհնելոյ ամենօրհնեալ Մեծն Մայր...

Օրհնեալ գովեալ եղիցի, մեզ Մայր մեր, Մայր մեր յամայր:

Հ. Գ. Մ. ԱԼԻՇԱՆ